



Ա Ր Ա Բ Ա Տ Ս

Թիկ Գ. — ԵՐԶԱԿԱ ԺԶ. 1883 ՏՈՐԻ ԺԶ. ՄԱՐՏ 31

ԱՌԱՔԻՆԻ ՄԱՐԴԻ ՑԱՂԹԱՆԱԿԻ.

Առաքինութիւնը մի գատարկ ծայն չէ, ինչպէս որ մի բանի մայնը դուրս է զայլիս. մարդս խը կեանքի մէջը կարող է զործով կատարել, որ չափ եւս որ սխալութը նա եւ շատ ու շատ տիղ ոտք քարի կազէր, բայց եւ այնովէս կարող է նա այն բանի յետնից ընկնել, ինչ որ Աստուածային է. եւ ինչ բանի որ խելօրի խելքը չէ հանում, այն բանը մարդս կատարումէ; զործով մանկական պարզ սրտովն:

ԵՒՀԵ

Երբ որ պատմութեան գրքերը բաց եմ անում ու կարգում, որ աւելի պարզ կարողանամ հասկանալ Աստուծոյ տեսչութիւնն ու տնօրէնութիւնները մարդկային ազգի ունեցած կեանքից ու նորա գլխին եկածներից, եթէ մի կողմից պատահում են ինձ ոյնպիսի անպիտան օրինակներ, որ մարդոց անձնասիրութիւնն ու անգիտութիւնը անբան անասունի, կամ վայրենի կատաղի գաղանի անասնութեանն ու գաղանութեանն եմ հասած տեսնում», կամ թէ յայտնի կերպով երեւումէ ինձ, որ նորանց մէջն աշխարհակալութեան ու բռնակալութեան հոգի է միայն եղել միւս կողմիցն եւս կարդալով չեմ կը տանում այն պատուական մարդոց կեանքն ու արած լաւ լաւ գործերն որոնց մէջ պարզ ու պայծառ կերպով երեւումէ իրանց խառն-

տութիւնն ու առաքինութիւնն եւ որով իրանց գարի մարդկանցից շատ բարձր են եղել, կարծես մահկանացու մարդիկ չեն եղել աշխարհիս վրայ իրանց թողած քաղցր ու անմահ յիշատակովն որ մարդիս սրտին չափազանց զիւր է գալիք այգափիսի մարդիկը պայծառ աստղերի պէս փայլել են մինչեւ անգամ շատ մութին օրերին։ Այս ասածու ինձ համար ապացոյց է, որ մարդիս մէջ այն, ինչ որ աստուածային է, յաւիտեան չէ մեռնում, չէ ոչնչանում բոլորովին ու միշտ՝ մինչեւ անգամ ամբողջ աղջերի սաստիկ ընկած միջոցին՝ իւր յաջողութիւններն է ունենում, իրան ճանապարհը բաց անում ու յառաջ տանում։ Թագաւորական թագի հասած աշխարհակաների ու բռնաւորների անունները կամ մառացուել են, կամ զգուանքով են յիշվում, բայց արգարոց յիշատակը միշտ մնումէ եւ օրհնութիւնով են բերան բերում, թէեւ շատ հարիւր տարիններով մեզանից առաջ ապրած լինին։

Բայց մի բանն է միայն մեզ զարմացնում —, մեզանից շատ հեռու ժամանակների ու երկիրների պատմութիւնն եւս մի եւ նոյն վկայութիւնն է տալի մեզ —, որ մարդոց մէջ այս ամենազնիւ հօգինները՝ որչափ որ ազնիւ են եղել նոյնչափ եւս ամենաբաղդաւոր մարդիկը չեն եղել այս աշխարհիս երեսին։ Կարելիք է ասել, որ տմեն տեղ այդպիսի մարդիկը կամ շատ աղքատութիւնով, նեղութիւններով, սրտի մեծ մեծ ցաւերով ու սաստիկ հօգուերի մէջն են իրանց կեանքն անց կացրել կամ անպատճութիւններ ու զրկանքներ են քաշել, կամ մինչեւ անգամ հաւածուել են իրանց ժամանակի մարդիկներից։ Նատերն իրանց կեանքը վերջացրել են արիւն թափելով, կամ ուրիշ զարհուրելի տանջանքներ քաշելով։ — Երկու, երեք օրինակ որ առնջ՝ հերիք է, որ ասածիս ճշմարտութիւնը հաստատուի։

Հին ու շատ լուսաւորուած Յունաց ազգի մէջ գտնում ենք Արէստէռէսի պէս մի մարդ, որ իւր ճշմարտասիրութիւնովն ու իւր հայրենիքին արած մեծ ծառայութիւններովն անուանի մի անձն էր. բայց լան կեանք ունեցաւ արդեօք նա. ոչ իւր հակառակորդների նախանձը նորան գուրս անել տուեց Աթէնքից, աքսորուեցաւ նա ու տարիններ անց կենալուց յետոյց օտարութեան թշուառութիւններից հազիւ աղասաւեց ու յետ գարձու կրկին իւր ծնած քաղաքն։ Մի աւելի երեւելի մարդ եւա,

Ասէրառէս ինչեսովան, որ Յունաց մէջ ամենից խմաստուն մարդն էր, իւր կեանքը բաղդաւա՞ր անց կացրեց արդիօք. ցաւելով պէտք է ասենք թէ՛ չէ՛. սորան եւս իւր թշնամիքը խորհուրդ տեսան, որ բանտ ձգեն. արին իրանց սրտի ուզածն, բայց զորանով չքաւականացան ունորա գատաստանն այնպէ՛ կտրեցին, որ իւր մահավը չմեռնի ու թոյն խմեցրին, սպանեցին: Հուշաբառ քաջասիրտ Հռովմայեցին, որ անմեհեր արիութիւնովն իւր հայրենական քաղաքի շահերը պաշտպանեց Կարթագինէի ծերակոյտի առաջին, իւր այդ քաջասիրտ արութեանը համար այն վարձատրութիւնը ստացաւ, որ ամենասարսափելի տանջանքներ քաշելով իւր հոգին փէց: Անձեւ՝ աղնիս փիլիտփայի երակները կորել հրամայեց իւր աշակերտը, արիւնածարաւ ներոն կայսրը, որ իւր վարժապետին այդ տեսակ մահով մեռցնի:

Եստ են նոյնպէս այն հալածանքներն, որ գեռ շատ յետովուայ ժամանակներումն եւս շատ գիտուն ու շատ առաքինի մարդիկ քաշեցին: Գտելու՛ արեգակի աշխարհի մեծ քննիքը, իւր արած գիւտերի համար, այն գիւտերի, որ գիտութեան մարդարիոններ պիտի մնան միշտ, իւրեւ հերետիկոս՝ յիսուսեանց անգութ քննութիւնովն ու գատաստանով բանտերի մէջ պիտի տօնջուէր: Քըսապոնք Կուլմանուը, բոլոր աշխարհիս մի նոր ու մեծ մասը գտնողը՝ մարդկային ազգի համար իւր արած բարերարութեան տեղը՝ վարձատրութիւն ստացաւ ի՞նչ. զրոյարութիւն: ապերախտութիւն, եւ այն նեղութիւնները, որ մինչեւ անգամ բանտի մէջ քաշեց: Եւր կրած շղթաները նա իւր հետ գերեզման տարաւ:

Խօն հարկաւոր է աւելի օրինակներ բերել այդպիսի իրողութիւնների մասին, քանի որ ազգաց տարեգիրների ամեն մի թերթի մէջ շատ ու շատ վկայութիւններ ենք գտնում: • Արդարը շտա ովտէ +աշէ: արդէն տօռմէր գանգատելով սազմնուերգուն Դաւիթ, ու նոյն մոքով, բայց մի եւ նոյն ժամանակ մի սուրբ կերպով սիրտ տալով ասաց Քրիստոս իւր աշակերտներին ինն երանութիւնները բերնից հանած միջոցին. • Երանելի է + դու+ +, երբ ու ճուրդի յեղ է համար ինախտապէն ու հալուծէն և ամենայն լոր բան սուտ տեղը յեր տեղ էտէն: Արակացե+ ու սիրուտէ+: յեր կազմը շտա կինէ երին+ու+ը. պատճառ ու այսպէս հալուծեցին յեղանից սուտ եղած մարդարէներէն: : Ենքն եւս՝ վսիմ՝ հոգին՝ սրոյ սիրտը լցուած

Եթ հեղութիւնով ու սիրով, որ ունէր մարդոց վրայ, որոյ բերանից թափումէր Աստուծոյ խմաստութիւնը, անօրէնների կարգումը համարուեց ու չարագործների մահովը մեռաւ Գոզգոթայումը խաչի վերայ: Եւ ինչպէս զարչութելի կերպով կատարուեց իւր մարդարէութիւնը հաղարաւոր իւր հետեւողների վերայ: Ո՞վ կարող է համարել այն անժիւ բազմութիւնը քրիստոնէից, որ տեսակ տեսակ տանջանքներով մեռան ու սպանուեցան՝ վկայելով ճշմարտութեան՝ Հռովմայեցւոց կայսերաց հայածանքների ժամանակներից սկսած ու հաւատոյ սպասափելի պատերազմների միջոցին Սպանիայում, Անգղիայում, Գաղղիայում ու Եւրոպայի ուրիշ տեղերումն եւ մինչեւ նոր ժամանակները:

Արդարը շատ պիտի քաշի: Այս նեղութիւններն, որ պիտի քաշեն, ամեն ժամանակ մարդոց կրօնամն կուրութիւնից կամ անգթութիւնից յառաջ չէ գալիս միայն, այլ շատ անգամ Աստուածանից մեզ համար սահմանուած մեր գլխին գալու բաների ներգործութիւնն եւս է: Մարդոց գատողութիւնով աւելի առաքինիների վիճակը շատ՝ անգամ ամենագառն է լինում, իսկ ընդհակառակն շատ խորամանգ չարագործը լող է տալի բաղդաւորութեան մեծ ջրերի մէջ:

Այսուեղ մի սրտաշարժ բան է միտքս գալիս. մի գիւղում՝ փողոցի այս ու այն երեսը՝ մին մինի հանդէսը ու մինը միտքին բոլորովին աննման տուններ կային. մինը գեղեցիկ տուն էր ու մի հարուստ գեղացու էր, իսկ միւսը՝ խարխուլ՝ յարգով ծածկած մի անպէտք խրճիթ էր: Երկրորդ տան մէջ բնակիֆումէր մի աղքատ այլի կին իւր մին ու ճար աղջկայ հետ: Մայրը քանի տարի էր, որ անկողինք էր ընկած ու տեղից վեր կինալ չէր կարողանում ու մինչեւ իւր մահն աղջկին ամեն կերպ խնամք էր տանում խեղճ հիւանդին իբրեւ իւր մօրն, որին սրտանց սիրումէր եւ որից իւր կեանքն անգամ չէր խնայիլ. իւր քաշած ոչ մի նեղութիւնն աչքին չէր գալի, միայն թէ իւր մօրն ամեն կերպ պահպանած լինի ու նորա մի խօսքը՝ երկու արած չինի: Այս օրիորդը մի հրեշտակ էր իւր մաքուր հոգւուն ու իւր որդիական պարտականութիւնը լաւ ձանաչեռ եւ ամենայն հաւատարմութեամբ կատարելու կողմանէ: Իւր մատաղ հասակի ամենայն դուարձութիւններիցն ամենայն ուրախութեամբ ինքն իրան զըր-

կումէր. շատ ու շատ բաներից կարօտ էր մնում. ամբողջ օրերն անց էր կացնում առանց՝ համարեալ թէ տեղից վեր կենալու ու գիշերները լուսացնումէր բանի վրայ. քունն աչքիցը կարումէր, ինչ է որ իւր սիրեկան հիւանդի դեղերի (ճարերի) ու երրեմն երբեմն սիրտն ուղած մի համով բանի համար եւս փող կարուցանայ աշխատել. առանց գանգատելու համբերում, տանումէր իւր մօր ամենակծու խոռքերն ու սաստիկ սրտի կպչող վարժունքը—եւ միայն ազօթքի մէջ էր գտնում սրտի թեթեւութիւն որպէս եւ իւր բոլորովին կարողութիւնից ընկած մարմնին՝ ոյժ ու զօրութիւն; Բայց երբ որ մայրը վախճանուեց, ինքն ընկաւ տեղեր: Օրից օր հալուելով, ոչ ոք չունենալով, որ սիրտն իւր վրայ ցաւի ու խնամք տանի իրան, շատի չգնաց, աղքատութիւնն ու հիւանգութիւնը այլ եւս չթողին նորան աչք բաց անելուց որ առողջութեան երես տեսնի, տեղիցը վեր կենայ. Էն պարկելն էր, որ պարկեց մինչեւ իւր մաշն, բայց հոգին աւանդելու միջոցին, խաչեց ձեռքերը սրտին ու կարծես, պայծառացած կերպարանքով աչքերը ձգեց գէպ ի երկինքը՝ բոլորովին գոչ ու խոնարհ սրտով ու իւր հնագանգութիւնը ցոյց տալով Աստուծոյ ամենասուրբ կամքին, որ այդպիսի կեանք ու այդպիսի մահ էր կամեցել իրան: — Այս միջոցին հարուստ հօրեւանն (գրացին) իւր զեղս կեանքն էր անց կացնում: Նորա ընդարձակ հողերը, նորա մեծ մեծ հօտերը՝ նորան ամեն միջոցները տալիս էին ամենաշռայլ կեանք անց կացնելու եւ ամեն վայելցութիւն քաշելու համար: Բաց ի գորանից մեծ անուն ու պատիւ ունէր նա իւր հասարակութեանը մէջ եւ չորս կողմն եղած տեղերումիւ թէեւ ամենայն մարդ գիտէր, որ մի մոլի, մի անպիտան մարդ էր: Նորա մասին այնպիսի վատ վատ բաներ էին ասում որ, եթէ նորա անպիտան արարմունքները բացուէին, յայտնուէին, նորա տեղը՝ պատժարանն էր: Վեռաւ նա առանց մի ցաւ, մի հիւանգութիւն քաշելու եւ ամենեւին վրայից չէր երեւում մի նշան, որ ցոյց տար թէ իւր արածների վրայ խղճմանքը տանչումէ, կամ փոշիմանութիւն ու զզնում կայ սրտումն. նորա մաշն յանկարծ պատահեցաւ. ձիից ընկնելն ու հոգին վչելը մին եղաւ, եւ ճիշտ մի եւ նոյն ժամին, յորում մեռաւ այն պատուական աղջիկն աղքատիկ ու յարդով ծածկած հնացած ու խարխուլ տնակի մէջ: Եթկու մեռերն եւս նոյն օրը թա-

զեցին: Հարուստի տունը եկել, լցուել էին մեծ բազմութիւն, որը մօտ տեղերից, որը՝ հեռուներից՝ եւ ահագին բազմութիւնով տարան գերեզմանատուն: Բայց երբ որ կատարեալ քրիստոնեայ խեղճ աղջկայ գագաղն էին դուրս բերում, նորան ճանապարհ ձգողները հազիւ մի քանի մարդիկ էին, որ այն եւս քրիստոնէական պարտականութիւն կատարելու համար էին միայն եկած՝ գտնուած: Աղքատն՝ աղջկան՝ բարեկամ՝ ունի որ փուշ աշխարհ: Այժմ նոքա՝ իրեւ հարեւաններ՝ հողի տակն եւս մին մինից հեռու չեն պարկած, այնտեղ եւս մօտ են, հարեւան են. հարուստի գերեզմանի վրայ պսպղումէ ոսկէտառ տապանագիրը մառմառի մահարձանի վրայ, իսկ նորա հարեւան աղջկայ գերեզմանի վրայ բարձրացած հողը՝ կոխ տալով՝ հաւասարուել է գետնի հետ ու էլ չէ երեւում, — խեղճ մեռելին էլ ով է միտք բերողը —, մի խղճմտանք անող եւս չեղաւ, որ նորա գերեզմանի վրայ գոնէ մի ծաղիկ ցանի (անկի):

Ճշմարիան ասեմ. մարդ որ այսպիսի բաներ տեսնումէ, երբեմն սիրոը կատկած է ընկնում թէ՝ Աստուծոյ արդարութիւն կայ արդեօք: Եւ ողորդ առաքինութիւնը աշխարհիս երեսին պաշտպանութիւն չէ գտնում, աչքից ընկած մի բանի նման, կամ անտէր՝ անտիրական մի որբի նման, որի երեսին մարկ տուողը չկայ, գես ու դէն պէտք է քարշ գայ՝ անտուն՝ անտեղ՝ անպատիւ ու արհամարհուած, մինչդեռ մալութիւնն ու մոլիք մարդը շատ անգամ ոսկու եւ պատիւների մէջ լող պիտի տայ: Միթէ ամեն մի քաջասիրտ պատերազմն, որ անումէ առաքինի մարդն իւր հոգին յստակ պահելու համար, ամեն մի զոհարերութիւն, որ յանձն է առնում մաքուր ու սուրբ գործի համար, յաւիտենական ու արդար Գատաւորի առաջին կշիռ ու գին չունի: Դեռ երկար ժամանակ պիտի զարմացած մնանք, որ շատ մարդիկ, այդպիսի հետեւանդներ տեսնելով, կեզառու ու մեղքերի ճանապարհով բազգաւորութեան համնելն շատ աւելի բարձր են համարում քան թէ քաջ ու աղնիւ սիրտ ունենալով՝ աղքատ ու կարօտ ապրելն ու մարդոց շարքումը, կարծես; չհամարուին ու չյիշուիլն:

Մարդիս շատ գառն վիճակից ու բազդի մեղ վրայ շատ ծուռ աչքով մտիկ տարուց շատ անգամ յառաջացած այսպիսի հարցումներին պատասխան գտնելու եւ տալու շատ չտարակու-

սիլ Քրիստոսի աշակերտն: Նա իւր Փրկչի խօսքերիցը գիտէ, «Եւ առաջ առաջ մինչ մինչ մինչ մինչ մինչ է հոս-»: ու ճշմարդու-մինչ մինչ ճշմարդու-մինչ, մինչ նայու համար շատ նեղու-մինչներ և առշնչներ: և ըստ Աստվածութեան՝ նոյն յա-կայական արդար Աստվածութեան ու Դատութեան է հոս-»: մինչ, մինչ մշու շատ դատը կոբյան+ների և պանելու լինէր:

Մեր ամենայն ու ամենալաւ ջանքի նպատակն, որից ամենեւին յափիտի հեռանանք, մարդկային ազգի աչքի առաջին դրած է, որ է հոգեւոր եւ բարոյական կատարելութեան հասնել: Մարդկային ազգի ամբողջ պատմութիւնը՝ հազարաւոր տարիներից սկսած, ամենաերեւելի մարդոց իմաստութիւնն, որ աշխարհիս երեսին ապրել են երբ եւ իցէ, աստուածային յայտնութիւնն Քրիստոս, որ ծառայի կերպարանքով աշխարհիս մէջ ման եկաւ, մարդիս սրտի մէջ երբէք զլուզ խղճմտանքի ձայնը, ամենայն արարածների անվերջ ներդաշնակութիւնը — ամեն բան, այս ամենն եւս միաձայն մեզ ասումեն թէ՝ մարդկային ազգի զաւակներ՝ այնպէս կատարեալ պիտի լինիք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է: Ու ինչ որ բոլոր մահկանացու մարդկային ազգի գերագոյն նպատակն է, այդ բանի մէջ իւր կողմանէ ամեն մի մարդ եւս պիտի իւր ման ունենայ, որ արժանանայ Աստուծոյ որդի լինելու: Պատճառ որ քանի որ մեր հոգոյ մաքրութիւնն աւելի կատարեալ է լինում եւ քանի որ աւելի պարզ ու յստակ է լինում մեր մէջ ճանաչումն այն ամեն բանի, ինչ որ աստուածային է, այնչափ աւելի ենք մօտենում երանելի հաղորդակցութեան մեր երկնաւոր Հօր Հետ: Կատարելութեան ամենաբարձր աստիճանն՝ բոլոր աշխարհիս արարածների օրէնքին համեմատ՝ պիտի լինի նաեւ երջանկութեան գերագոյն աստիճանն:

Բայց այս աշխատանիւս բարդաւորութեանն ու Երջանիւս-մինչն իրանց ինչութեանը (ինչ լինելու) կողմանէ բոլորովին տարբեր բաներ են: Աշխարհիս բազգաւորութիւնն՝ լաւ ապրելն է, որ լինումէ աշխարհիս բարիքները վայելելով: լաւ օրեր ունենալու հասնել կարող է մարդու նաեւ առանց իւր խղճմտանքին հարցնելու: երբեմն միայն իւր խելքը յաջողակ ու վարպետ կերպով բանեցնելով: երբեմն պատահումէ եւս է մեզ լաւ օրեր տեսնել արդէն այնպիսի առաջ զաւակ մեր ծնելովը, կամ ժառանգ լինելովը, որ բազգաւորութեան ծոցի, գրկի մէջն ենք լինիսում: Բայց այս

աշխարհային բաղդաւորութիւնը մեր մարմնաւոր կեանքը լու անց կացնելու համար է միայն պէտք գալիս. մի ներքին բաւականութիւն, որով մեր հոգին դոչ եւ ուրախ լինի, չէ կարող տալ մեղ. աւելի վասն այն է, որ մեզ իրանից բարձրացնելու, բարյական՝ բանական ու հոգեւոր բարձրութեան հասցնելու բոլորովին անկարող է; Այս որ այսպէս է, բայց եւս աւելի վասն այն է որ, եթէ մարդու աշխարհային բաղդաւորութեան է հասել, խր խղճմատնիքի դէմ մեղանչելով, ոյն ժամանակ մեզ բարյագէս ու հոգեւորապէս բարձրանալու տեղը՝ աւելի եւ աւելի ցածանումնը. պատճառ որ մեզք գործողը՝ շատ հեշտ կերպով մեղքի ծառայ է գառնում. բաց ի սորանից՝ այս եւս պիտի ասենք, որ աշխարհիս երեսին մեր ունեցած բաղդաւորութիւնն անհաստատ է, ջուրի ալիքների է նման. այսօր մահկանացու մարդին փառքով ու պատուզ կլցնի, կզարդարի, կփռուաւորեցնի. վազն՝ ամեն բան ջուրի ալիքի նման մի քարի կրզարկուի ու կփշրուի: Պատիւ հարստութիւն, յաւ կեանք անց կացնելն միշտ անհաստատ ու փոփոխական բաներ են. ու հազար մարդից մինին հազիւ է վիճակուած այդ ցանկալի բաներն ունենալ ու վայելել այնպէս, որ ասի թէ՝ ամենայն բանով ի եմ ոչ մի բան պակաս չէ ինձ: Այս պատճառով անկարելի է, որ մեր կեանքի նպատակը՝ աշխարհիս բաղդաւորութեան մէջը լինի. եթէ չէ, Աստուած ամեն մի մարդի՝ առանց զանազանելու բաղդաւորութեան հաւասար բաժին տուած կլինէր. ինչու որ ամենքս եւս հաւասար իրաւունք ունեցող Աստուծոյ զաւակներ ենք:

Բոլորովին ուրիշ բան է երջանկութիւնն, որ աշխարհիս Փրրկիչը նոցա է խոստանում, որ մաքուր սիրտ ունին, որ հեզ են ու խոնարհ սրտով: Այս աստուածային բարեբաղդութիւնն, որ առաքինի մահկանացու մարդիկը արդէն այս կեանքում զգումն ու իրանց սիրտն իրանց վկայումէ այդ մասին, արտաքին հանգամփնքներից կախում չունի. մարդու լիութեան մէջ ապրի թէ նեղութեան ու աղքատութեան մէջ բոլոր իւր կեանքն անց կացնի, բարձր ու պատուաւոր տեղ ու դիրք ունենայ՝ թէ ամենահասարակ մարդն լինի, առաջ ապրի թէ տկարութիւնով իւր կեանքն անց կացնի, սարսափելի տանջանքների մէջ մեռնի՝ թէ խաղաղ ու հանդարս կերպով հոգին փչի, այս ու այսպիսի ար-

տաքին հանգամաներից ամենեւին կախում չունի աստուածային բարեբազգութեան, կամ երջանկութեան զգացումը։ Այս ամենամաքուր բաղդաւորութիւնն որոյ մէջն է եւ յաւիտենական կեանքի ապահովութիւնն ու երաշխաւորութիւնը, միշտ յողթութեան գին ու վարձն է նոցա, որ հաստատուն կերպով ու անդադար ետեւից են ընկնում ձեռք բերելու այն մարգարիտն, որ Քրիստոս իւր ասած գեղեցիկ առակովն Աստուծոյ արքայութիւնն էր հասկանում ու այդ անունը տալի։ Այս պատուական մարգարիտն գեռ եւս այս կեանքումն չենք կարող բոլորովին ձեռք բերած լինել եւ ունենալ, այլ գորա ետեւից պիտի ընկնենք ձեռք բերելու, ունենալու. սկատճառ որ մահկանացուների մէջ ով է բոլորովին կատարեալը։ կամ որոյ ճանաչումն, գիտութիւնն ու առաքինութիւնը թերի ու անկատար բան չէ, քանի որ այս աշխարհումն է ապրում։ — Հա՛ ուղիղ սրտով արած պատերազմն առաքինութեան ու ճշմարտութեան համար արդէն մեծ եւ սուրբ նշանակութիւն ունի, թէ եւ մեր մարդկային բնութեան տկարութիւններից շատ անգամ յաղթուած եւս լինինք։ Քաջասիրտ պատերազմով հօգույ մէջն արդէն այս կեանքումն եւս ծագումէ, փայլում ու լուսաւորում երկնային փառքի ճառագայթը, նա զգումէ, որ Աստուծոյ աւելի եւ աւելի մօտենումէ, թէ Աստուծոյ որդի լինելու օրշնութիւնն՝ քանի գնումէ աւելի եւ աւելի զօրեղ կերպով է իւր սրտի ու կեանքի մէջը ծաւալում։ Եւ երբ որ իւր մահուան օրը գալիս է, նա ուրախ է լինում, որ իւր երկրաւոր կեանքը՝ յաւիտենական կեանքի համար բոլորովին անպատճ կերպով անց չկացաւ։ Այս աշխարհիցս բաժանուելու միջոցին՝ խոնարհ սրտով կրկնումէ իւր Փրկչի յաղթանակի խօսքը թէ՝ «ամենայն ինչ կատարեալ է. Հայր, Քո ձեռքդ եմ աւանդում իմ հոգիս»։

Ով որ մարդկութեան աւելի ազնիւ նպատակների համար քաշած աշխատութիւնի ուրախացնող զգացմունքն ունի եւ զգացել է թէ Աստուծոյ հետ միանումէ, այն մարդը յօժար սրտով կհրաժարուի աշխարհիս՝ մեզ խարող բարիքներից՝ գանձից, որոց հետ շատ ցաւեր եւս կան։ Նա գիտէ որ, եթէ աստուածային իմաստութիւնը հարկաւոր համարէր այդպիսի բարիք ու գանձ իրան պարգեւելու, իւր ստեղծողի ձեռքին դժուար չէր, չաղուց ունեցած կլինէր։ Բայց Աստուած ուրիշ կերպ էր կամե-

ցել անօրինել՝ ու այ ն էր բարին: Կարելի է, որ երկրաւոր հարբատութիւնն, ամենայն բարիքով լցուած լինեն աւելի արգելք կլինէր, քան թէ կօգնէր իւր ջանփին ու ձգտումին առաքինութեան ու ճշմարտութեան համար՝ ու կյառաջացնէր կարելի է, որ ինքն իւր ազնիւ ջանքին մէջ յետոյ կոկարանար, կծուլանար, կթուլանար՝ ու իւր լուրջ աշխատութեանը համար կանգէտքանար: Նա՝ լաւ ապրելով ու վայելցութիւններ քաշելով՝ երբէք չէր կարող իւր անմահ հոգւոյ համար, ու իւր նման մարդոց համար այն երթանկութիւն բերող՝ շահն ունենալ, որ ունեցաւ ու գտաւ կեանքի վշտ ու նեղ ճանապարհի վրայ: Մեր վատ օրի մէջ լինեն անգամ, մեր ժողովրդից չճանաչուին, նախատուին ու անարգուին անգամ, մեր հայածուին ու բանտերի մէջ տանջուին անգամ՝ ճշմարտութեան վրայ պատերազմաղի համար շատ անգամ Աստուծոյ հրեշտակներ ենդ արձել, որ նորան խթան են եղել միշտ աւելի եւ աւելի հաստատ մնալու՝ եւ իւր անձը յաղթելու մէջ միշտ աւելի փառաւոր յաղթութիւն անելու յաջողութիւն են տուել: Անբաղդութիւն ասած բանդ ազնիւ քրիստոնէի համար մաքրող հուր է աստուածային, որոյ մէջ իւր զօրութիւնը աւելի զօրանումէ ու հաստատվում:

Աստուածային մի աներեւոյթ առաջնորդութիւն ու տեսչութիւն կայ ամենայն մարդոց վիճակի մէջ, նոցա գլխին եկած բաների մէջ: Բաղդաւորութեան, կամ անբազութեան արտաքին երեւոյթը շատ քիչ կապատահից որ մարդիս սրտի խորքի մէջ էլածի մասին մի ուղիղ հետեւանք դուրս հանելու տանի մեզ անխոտոր: Նատ անգամ յարաչար սիսարիւմենք, երբ որ մի մահկանացուի արժանաւորութիւնը չափումենք բազմութեան՝ նորա մասին խօսած՝ գովեստներով, կամ նորա վրայ վատ խօսածներից, նորան հաւանելուցը, կամ յհաւանելուց, հասարակութեան մէջ նորա բռնած պատուաւոր տեղից ու գիրքից, կամ՝ նորա ունեցած մեծ հարստութիւնովն: Աւելի ու շատ աւելի սիսալուած կլինէինք, երբ որ մեր զուարձութիւնները, խնձոյքներ ու տօներ կատարելը սրտի ուրախութեան նշաններ համարելու լինէլնք: Նրկրիս մէջ այնպիսի խոր տեղեր կան, ուր որ հսկայական ուժեր են բնակում, որոց գործ կատարելու տեղն երբէք չէ կարող տեսնել մահկանացու մարդի աչքը, այսպէս եւս մարդկային սրտի մէջ կան խոր աւեղեր, որոց մէջ նայելու համար մար-

դիս աչքը անզօր է ու տեսնել չէ կարող, եւ ոչ աշխարհքը մի կարծիքի գալ կարող է, եւ ուր որ միայն երկնային ամենագիտութիւնն ու արգարութիւնն են իշխում։ Այստեղ ազբիւների խոխոջելու ձայներ է գալիս, — ով է իմանում — , ամենագառն անէջներ են թափուելու թէ՛ ուրախութիւն բերող՝ օրչնութիւն են, թէեւ հողի մակերւոյթը (երեսը), որ մեր աչքին է ընկնում, մի ծաղկած գաշտի նման լինի, կամ թէ ամայի անապատի։ Ոչ մի բան այնպէս սաստիկ չէ տանջում մարդիս, ինչպէս որ խղճմտանքի մեղ տուած չարչարանքն՝ ոչ մի բան այնպէս մեղ երջանիկ չէ անում, ինչպէս որ խղճմտանքի անվրդով խաղաղութիւնն ու հանգստաւթիւնը։

Աստուած է իշխանն աշխարհիս, Նորա ձեռքին է ամեն բան։ Նա է անօրինում ու սահմանել է թէ ընութեան մէջ եւ թէ մարդկային աշխարհի մէջ, որ նոցա ամենազնիւ ու ծաղկեալ գրութիւնը միմեանց հակառակ զօրութիւնների իրար հետ կռուելովը յառաջ գայ։ Ոչ մի երեւելի բան, ոչ մի բան, որ արժանի է բանական մարդի արժանաւորութեանն, յառաջ չէ եկել երբէք՝ առանց մարդոց տաժանելի ջանքերի ու աշխատութիւնների թէ՛ մորով՝ թէ՛ զգացմունքով. ուզումեմ ասել թէ՛ որքան խելք են թափել միաք մաշել, որքան արիւն պղտորել կամ փչացրել, մինչեւ որ կարսզացել են մի մեծ ու բանական մարդիս արժանի մի բան, մի գործ գլուխ բերել, եւ այս մարդիկը հասարակ մարդիկ չեն եղել, այլ աստուածային կոչումն են ունեցել ու սուրբ սիրա։ Աւելի նեղ շրջանների մէջն անգամ, մինչեւ անգամ ընտանեկան կեանքի մէջ քիչ ջանք. քիչ աշխատութիւն, քիչ հոգացողութիւն, քիչ զոհարերութիւն պէտք չէ տան հօր ու մօր կողմից, որ խաղաղութիւն, սէր, բարի վարք, մարդավարութիւն պահուի տանը մէջ հաստատուն կերպով ու մատաղ սերունդը կրթուի ու մեծանայ ամենամաքուր բազգաւորութիւն վայելելու համար։ Այսպիսի ջանք, աշխատութիւն ու զոհարերութիւն մի բարի գործի համար, մի նշանաւոր գործի համար, ուր որ կայ, որքան գժուարութիւններ եւս օր արգելք լինին, որքան էլ անյաղթելի որ երեւին այդ գժուարութիւններն, ժամանակի վատ բերմանքն եւս վրան գալով, որքան էլ ընդգէմ լինին ու թշնամարար ներգործեն, նաւի յաջող ընթացքը արգելող, խանգարող ու վատնգել սպառնացող ծովի

մրիկի ու կատաղի ալիքների նման, բայց եւ այնպէս քրիստոնէտիան հաւատը միշտ աւելի բարձր ու գերազանց դօրութիւն է ցոյց տալիս իրան: Ո՞վ որ իւր յոյսն Աստուծոյ վրայ է գրել, ո՞վ որ նորան է ապաւինել, նու Աստուծոյ բարեկամն է եւ իւր որսի մէջը կրումէ այն ապահով զէնքն, որով վերջը վերջը յաջողութիւնը պիտի իւր կողմը լինի:

Եթէ առաքինութեան գործը շատ անգամ եւս խկոյն չէ յաջողում, կամ թէ մարդիս կեանքն իւր շատ ու շատ հսկութեան նեղութիւններն ունի ու միանգամայն շատ կարճ է կատարեալ յաղթութիւն անելու համար, բայց քրիստոնեայն գիտէ, ո՞ւ գէրեղան ճանելոց յետոյ Ն յա-կանչեական կեան+ էայ: Իւր յոյսն է ասում նորան այս մասին, իսկ իւր երկնաւոր Աւոսւցիչն ու Փըրկիչը նոյնն ամենապարզ կերպով յայտնել է նորան: Խնչի՞ համար ուրեմն պիտի տրամենք, որ մենք այս աշխարհումն ակար արարածներ ենք, երբ որ համոզուած ենք թէ՝ յաւիտենական կեանքն այն ժամանակն է սկսում, երբ որ ժամանակաւոր կեանքը վերջանումէ: Խնչի՞ համար պիտի անմիտիթար լանք մեր ունեցած կորուստների ու մեր գլխին եկած փորձանքների վրայ, երբ որ մեք Աւետարանիցն խմացել ենք թէ՝ որոնք որ Աստուած են սիրում, ամեն բան նոցա բարւոյն պիտի ծառայի, եւ թէ այս ժամանակիս յարչարանքները չեն արժիլ այն փառքին, որ մեզ պիտի յայտնուի:

Թող չարագործը միշտ ուրախանայ, որ իւր բովէական եւ միայն անմիտին խարող՝ չար խորչուրդները, անպիտան ժողովրութիւնները կատարվումն: Այն է նորա վարձը: Բայց մեր հաստատուն եւ անդրդուելի հաւատը՝ որ Աստուած մեր երկնաւոր Հայրը մեզ ողորմած է: Նորա ողորմութիւնը մեզանից անպակաս է, եւ մեր որտին ուրախութիւն բերող մեր գիտակցութիւնը, (Խղճմանքովը գիտենալը), որ միշտ Աստուած սիրել ենք եւ ուղիղ բանն ենք արել, առաջնորդնեան Ն յաղթանակն է, որ աշխարհիս վրայ ապրող ոչ մի բռնակալի իշխանութիւն ու զօրութիւն եւ ոչ մաշն անգամ կարող է ոչնչացնել: